

ԽՈՐՀՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՄԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԻՆԳԵՐՈՐԳ ՍԵՍԻԱՆ

322/19

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

ժողովրդական կամիսարների հարիւրի նախագահ յեմ
Արտաքին Գործերի ժողովրդական կամիսար
րնկեր վ. Մ. ՄՈՂՈՏՏՈՎԻ գեկուցումը
ԽՈՐՀՄ Գերագույն հարիւրի նիստում
1939 թ. հոկտեմբերի 31-ին

ՔԱՂԱՔԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԶՈՒԹՅԱՆ

ՑԵՆԵՎԱՆ ● 1939

814

ՊՈԼԵՏՈՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԵՐՆԵՐԻ, ՄԻՋՅԵՐ

30 JAN 2018

ԽՍՀՄ ԱՌԱՋԻՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՍԻԱՆ



**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

Ժողովրդական կոմիսարների հորհրդի նախագահ յեկ
Արտաֆին Գործերի ժողովրդական կոմիսար
բնկեր Վ. Մ. ՄՈՒՆՏՈՎԻ զեկուցումը
ԽՍՀՄ Գերագույն հորհրդի նիստում
1939 թ. հոկտեմբերի 31-ին

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

Внеочередная пятая сессия Верховного
Совета СССР 1-го созыва

**О ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ
СОВЕТСКОГО СОЮЗА**

Доклад Председателя Совета Народных
Комиссаров и Народного Комиссара Иностранних
Дел тов. В. М. МОЛОТОВА на заседании
Верховного Совета СССР 31 октября 1939 года
Государственное издательство полит. литературы

Ереван, 1939



1-364494

Ընդէ՛ր դեպուաատներ:

Վերջին յերկու ամսվա ընթացքում միջազգային
իրադրության մեջ տեղի ունեցան կարևոր փոփոխու-
թյուններ: Այդ վերաբերում է, ամենից առաջ, Յեվ-
րոպայում ստեղծված դրությանը, բայց նույնպես եւ
այն յերկրներին, վորոնք գտնվում են Յեվրոպայի
սահմաններից շատ հեռու: Այս կապակցութեամբ պետք
է մատնանշել յերեք հիմնական հանգամանքներ, վո-
րոնք ունեն վճռական նշանակութիւն:

Նախ՝ պետք է մատնանշել Խորհրդային Միութեան
և Գերմանիայի փոխհարաբերութիւններէ մեջ տեղի
ունեցած փոփոխութիւնները: Ոգոստոսի 23-ին ՀՀար-
ձակվելու խորհրդային-գերմանական պայմանագիր
կնքելու ժամանակից վերջ դրվեց այն աննորձալ Հա-
րաբերութիւններին, վորոնք մի շարք տարիների ըն-
թացքում դոյութիւն ունէին Խորհրդային Միութեան
և Գերմանիայի միջև: Յեվրոպական վորոշ տերու-
թիւնների կողմից ամեն կերպ հրահրվող թշնամանքին
փոխարինելու յեկայ մերձեցումը և բարեկամական
հարաբերութիւնների հաստատումը ԽՍՀՄ ու Գերմա-
նիայի միջև: Այդ նոր, լայլ հարաբերութիւնների հե-
տադա բարելավումն իր արտահայտութիւնը դտավ
ԽՍՀՄ և Գերմանիայի միջև բարեկամութեան ու սահ-
մանի վերաբերյալ գերմանո-խորհրդային պայմանա-
գրի մեջ, վորը կնքվեց սեպտեմբերի 28-ին Մոսկվա-

յում: Խորհրդային Միության և Գերմանիայի, Յեկրոպայի յերկու ամենախոշոր պետութիւնների, փոխհարաբերութիւններն մեջ կատարված կարուկ շրջադարձը չէր կարող չանդրադատեալ ամբողջ միջազգային դրութեան վրա: Ընդամին իրադարձութիւններն ամբողջապէս հաստատեցին խորհրդային-գերմանական մերձեցման քաղաքական նշանակութեան այն դնահատականը, վորը արդէ Գերազույն Խորհրդի անցյալ սեսիայում:

Յերկրորդ՝ պետք է մատնանաչել այնպիսի մի փոստ, ինչպիսին է Լեհաստանի ռազմական ջախջախումը և լեհական պետութեան քայքայումը: Լեհաստանի կառավարող շրջանները քիչ չէին պարծենում իրենց պետութեան «ամբողջամբ» և իրենց բանակի «հզորութեամբ»: Սակայն, բավական յեղաթիւ Լեհաստանի վրա ուղղված կարճ հարվածն սկզբում գերմանական բանակի, իսկ այնուհետև՝ կարմիր բանակի կողմից, վտրպեսդի վոչինչ չմնար վերապահան պայմանադրի այդ ճիւղը դավակից, վորն ապրում էր վոչ-լեհական աղղութիւնների ճնշման հաշիւն: Գերմանիայի և ԽՍՀՄ միջև անսկզբունք խուսանավման ու խաղի «տրաղիցիան քաղաքականութիւնն» անճարակ դանկից և լիովին սնանկացաւ:

Յերրորդ՝ պետք է խոստովանել, վոր Յեկրոպայում բռնկած մեծ պատերազմն արմատական փոփոխութիւններ մտցրեց ամբողջ միջազգային իրադրութեան մեջ: Այդ պատերազմն սկսվեց Գերմանիայի ու Լեհաստանի միջև և վերածվեց պատերազմի—մեկ կողմից՝ Գերմանիայի, մյուս կողմից՝ Անդլիայի ու Ֆրանսիայի միջև: Գերմանիայի և Լեհաստանի պատերազմն ավարտվեց արազսրեն՝ լեհական ղեկավարներն լիար-

կատար սնանկութեան հետևանքով: Լեհաստանին, ինչպես հայտնի յե, չորհնցին վո՛չ անդլիական, վո՛չ Ֆրանսական յերաշխիքները: Մինչև այժմ էլ, իսկապես, հայտնի չէ, թե ինչ «յերաշխիքներ» էին դրանք: (Ընդհանուր ծիծաղ): Գերմանիայի և անդր-Ֆրանսական բրտի միջև սկսված պատերազմը դանք-վում է միայն իր առաջին փուլում և ինչպես հարկն է դեռ չի ծաղալիւ: Այնուամենայնիւ, հասկանալի յե, վոր այդպիսի պատերազմը պետք է արմատական փոփոխութիւններ մտցնէր Յեկրոպայի դրութեան մեջ, և այն էլ վո՛չ միայն Յեկրոպայի:

Միջազգային իրադրութեան այս կարևոր փոփոխութիւնների կապակցութեամբ վորոչ հին Փորմուլաներ, վորոնցով մենք սղալում էինք դեռ վերջերս, — և վորոնց շատերն այնպե՛ս սովորել էին, — բացահայտորեն հնացել են և այժմ անկիրառելի յեն: Այդ մասին մենք պետք է հաշիւ տանք մեզ, վորպեսդի Յեկրոպայում ստեղծված քաղաքական նոր դրութեան դնահատականի մեջ խուսափենք կոսլիս սխալներից:

Հայտնի յե, որինակ, վոր վերջին մի քանի ամիսների ընթացքում այնպիսի հասկացողութիւններ, ինչպես «ադրեստիան», «ադրեստորը», ստացել են նոր կոնկրետ բովանդակութիւն, ձևը են բերել նոր իմաստ: Դժվար չէ կոահել, վոր այժմ մենք չենք կարող այդ հասկացողութիւններից ողտվել նույն այն իմաստով, ինչպես, ասենք, Յ—Ա ամիս սրանից առաջ: Այժմ, յեթե խոսենք Յեկրոպայի մեծ տերութիւնների մասին, Գերմանիան դտնվում է այնպիսի պետութեան դիրքում, վորը ճգտում է պատերազմի ամենաարագ ավարտման ու խաղաղութեան, իսկ Անդլիան և Ֆրան-

սխան, վորոնք դեռ յերեկ կոչում էյին ազրեսսիայի դեմ, կողմնակից են պատերազմը շարունակելուն և դեմ են հաշտության կնքմանը: Դերերը, ինչպես տեսնում եք, վոխվում են:

Անգլիական և Ֆրանսական կառավարությունների փորձերը՝ իրենց այդ նոր դիրքն արդարացնելու և հաստանին արված պարտավորություններով, հասկանալի չեն, բացահայտորեն սնանկ են: Հին և հաստանի վերականգնման մասին, ինչպես յուրաքանչյուրին հասկանալի չեն, խոսք անդամ լինել չի կարող: Ուստի անխմատ և ներկայիս պատերազմի շարունակումն առաջիկա լեհական պետության վերականգնման դրոշի տակ: Հասկանալով թաղ, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները, սակայն, չեն ուղում դադարեցնել պատերազմն ու վերականգնել խաղաղությանը, այլ նոր արդարացում են փնտրում Գերմանիայի դեմ պատերազմը շարունակելու համար:

Վերջին ժամանակներս Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանները փորձում են իրենց պատկերացնել վորպես ժողովուրդների դեմոկրատական իրավունքների համար՝ ընդդեմ հիտլերիզմի պայքարող մարտիկներ, ըստվորում անգլիական կառավարությունը հայտարարեց, վոր իբր թե նրա համար Գերմանիայի դեմ պատերազմելու նպատակը հանդիսանում է վոչ ավելի ու վոչ պակաս, քան «հիտլերիզմի վոչընչացումը»: Ստացվում է այնպես, վոր պատերազմի անգլիական, իսկ նրանց հետ միասին նաև Ֆրանսական կողմնակիցները Գերմանիայի դեմ հայտարարել են «իդեոլոգիական պատերազմի» պես ինչ-վոր մի բան, վորը հիշեցնում է հին կրոնական պատերազմները: Իրոք, իրենց ժամանակին կրոնական պատերազմներն ընդդեմ հերետիկոսների ու այլաբանների մոլա եյին: Դրանք, ինչպես հայտնի չեն, հասցրին ժողովրդական մասսաների համար ամենածանր հետևանքների, անտեսական քայքայման և ժողովուրդների կուլտուրական վայրենացման: Վորեք այլ բան այդ պատերազմները չեյին ել կարող տալ: Բայց այդ պատերազմները միջնադարի ժամանակներումն էյին: Արդյոք դեպի միջնադարի այդ ժամանակները, կրոնական պատերազմների, սնտիապաշտության և կուլտուրական վայրենացման ժամանակները չե՞ն մեզ նորից քաշում Անգլիայի ու Ֆրանսիայի տիրապետող դասակարգերը: Համենայն դեպս, «իդեոլոգիական» դրոշի տակ այժմ սկսված է ել ավելի մեծ մասշտաբի և Յեթրոպայի ու ամբողջ աշխարհի ժողովուրդների համար ել ավելի մեծ վտանգներ սպառնացող պատերազմ: Բայց այդ տեսակի պատերազմն իր համար չունի վորեք արդարացում: Հիտլերիզմի իդեոլոգիան, ինչպես և ամեն մի այլ իդեոլոգիական սիստեմ, կարելի չեն ընդունել կամ ժխտել. այդ քաղաքական հայացքների գործ է: Բայց ամեն մի մարդ կհասկանա, վոր իդեոլոգիան չի՛ կարելի վոչնչացնել ուժով, չի՛ կարելի նրան վերջ տալ պատերազմի միջոցով: Ուստի վոչ միայն անխմատ է, այլև հանցագործություն է այնպիսի պատերազմ մղելը, ինչպես «հիտլերիզմի վոչնչացման» համար պատերազմը, վորը քողարկվում է հանուն «դեմոկրատիայի» պայքարելու կեղծ դրոշի տակ: Իսկապես, վոչ մի կերպ չի կարելի դեմոկրատիայի համար պայքար անվանել այնպիսի գործողությունները, ինչպես կոմունիստական կուսակցության փակումը Ֆրանսիայում, Ֆրանսական պառլամենտի կոմունիստ դեպուտատների ձերբակալությունները, կամ քաղաքա-

րազմներն ընդդեմ հերետիկոսների ու այլաբանների մոլա եյին: Դրանք, ինչպես հայտնի չեն, հասցրին ժողովրդական մասսաների համար ամենածանր հետևանքների, անտեսական քայքայման և ժողովուրդների կուլտուրական վայրենացման: Վորեք այլ բան այդ պատերազմները չեյին ել կարող տալ: Բայց այդ պատերազմները միջնադարի ժամանակներումն էյին: Արդյոք դեպի միջնադարի այդ ժամանակները, կրոնական պատերազմների, սնտիապաշտության և կուլտուրական վայրենացման ժամանակները չե՞ն մեզ նորից քաշում Անգլիայի ու Ֆրանսիայի տիրապետող դասակարգերը: Համենայն դեպս, «իդեոլոգիական» դրոշի տակ այժմ սկսված է ել ավելի մեծ մասշտաբի և Յեթրոպայի ու ամբողջ աշխարհի ժողովուրդների համար ել ավելի մեծ վտանգներ սպառնացող պատերազմ: Բայց այդ տեսակի պատերազմն իր համար չունի վորեք արդարացում: Հիտլերիզմի իդեոլոգիան, ինչպես և ամեն մի այլ իդեոլոգիական սիստեմ, կարելի չեն ընդունել կամ ժխտել. այդ քաղաքական հայացքների գործ է: Բայց ամեն մի մարդ կհասկանա, վոր իդեոլոգիան չի՛ կարելի վոչնչացնել ուժով, չի՛ կարելի նրան վերջ տալ պատերազմի միջոցով: Ուստի վոչ միայն անխմատ է, այլև հանցագործություն է այնպիսի պատերազմ մղելը, ինչպես «հիտլերիզմի վոչնչացման» համար պատերազմը, վորը քողարկվում է հանուն «դեմոկրատիայի» պայքարելու կեղծ դրոշի տակ: Իսկապես, վոչ մի կերպ չի կարելի դեմոկրատիայի համար պայքար անվանել այնպիսի գործողությունները, ինչպես կոմունիստական կուսակցության փակումը Ֆրանսիայում, Ֆրանսական պառլամենտի կոմունիստ դեպուտատների ձերբակալությունները, կամ քաղաքա-

կան աղատութիւններն սահմանափակումն Անդլիայում, չլթուլացող ազգային ճնշումը Հնդկաստանում և այլն:

Պարզ չե՞ արդ, Վոր Յեմբրոպայում տեղի ունեցող ներկայիս պատերազմի նպատակն այն չէ, ինչի մասին խոսում են ունկնդիրներն լայն շրջանի համար կազմակերպվող պաշտոնական յերլոյթներն մեջ Պրանսիայում ու Անդլիայում, այսինքն՝ հանուն դեմոկրատիայի պայքարելը չէ՞, այլ ինչ-Վոր մի ուրիշ բան, Վորի մասին այդ պարոնները բացահայտորեն չեն խոսում:

Գերմանիայի դեմ անդլո-Փրանսական պատերազմի իսկական պատճառը Վոչ թե այն է, Վոր Անդլիան ու Պրանսիան, իբր թե, յերդվել են վերականգնել նախկին լեհաստանը, և, իհարկե, Վո՛չ թե այն է, Վոր նրանք, իբր թե, վճռել են իրենց վրա վերցնել դեմոկրատիայի համար պայքարելու խնդիրը: Անդլիայի և Պրանսիայի կառավարող շրջանները, հասկանալի չե, ունեն Գերմանիայի դեմ պատերազմելու այլ, ե՛լ ամէլի իսկական մոտիվներ: Այդ մոտիվները վերաբերում են Վոչ թե Վորեն մի իդեոլոգիայի բնագավառի, այլ նրանց, Վորպէս դադութային հզոր տերութիւնների, կրկնակի նյութական շահերի սփերային:

Իրիտանական կայսրութիւնը, Վորի բնակչութիւնը հասնում է 47 միլիոնի, տիրապետում է 480 միլիոն բնակչութիւն ունեցող դադութների: Պրանսիայի դադութային կայսրութիւնը, Պրանսիայի, Վորի բնակչութիւնը 42 միլիոնից ամէլի չէ, բնդդրկում է 70 միլիոն բնակիչ՝ Փրանսական դադութներում: Այդ դադութներին տիրապետելը, Վոր հնարավորութիւն է տալիս շահագործելու հարյուր-միլիոնավոր մարդ-

կանց, Անդլիայի և Պրանսիայի համաշխարհային տիրապետութիւն հիմքն է հանդիսանում: Սարափն այդ դադութային տիրակալութիւնների նկատմամբ դերմանական պահանջներն հանդեպ—ահա՛ թե Վորն է Գերմանիայի դեմ Անդլիայի ու Պրանսիայի ներկայիս պատերազմի աստառը, այն Գերմանիայի, Վորը լուրջ կերպով ուժեղացել է վերջին ժամանակներս՝ Վերսալյան պայմանագրի քայքայման հետեանքով: Համաշխարհային տիրապետութիւնը կորցնելու ահն Անդլիայի և Պրանսիայի կառավարող շրջաններին թելադրում է Գերմանիայի դեմ պատերազմի հրահրման քաղաքականութիւն:

Այսպիսով, այդ պատերազմի խնդիրալիստական բնույթն ակնբախ է յուրաքանչյուրի համար, ով ուզում է տեսնել իրերի իսկական դրութիւնը, ով աչքերը չի փակում փաստերի առջև:

Այս բոլորից յերևում է, թե ում է հարկավոր այդ պատերազմը, Վորը մղվում է հանուն համաշխարհային տիրապետութիւն: Իհարկե, Վոչ բանվոր դասակարգին: Այդպիսի պատերազմը բանվոր դասակարգին Վոչինչ չի խոստանում, բացի արյունոտ զոհերից ու աղեաներից:

Սրանից հետո, դատեցեք ինքներդ. վերջին ժամանակաշրջանում փոխվե՞լ է, թե՞ չի փոխվել այնպիսի հասկացողութիւնների բովանդակութիւնը, ինչպէս «ազրեստիան», «ազրեստորը»: Դժվար չէ տեսնել, Վոր այդ բաների դորժածումը հին իմաստով, —այսինքն՝ այնպէս, ինչպէս այդ կար նախքան Խորհրդային Միութիւնն ու Գերմանիայի քաղաքական հարաբերութիւնների մեջ կատարված վերջին վճռական շրջադարձը և նախքան Յեմբրոպայում խնդիրալիստական մեծ պատերազմի սկսվելը, —միայն խոռոչափութիւն կա-

րող և ստեղծել գլուխներուս և անխուսափելիորեն կմղի
դեպի սխալ հետևութիւններ: Վորպէսզի այդ չպա-
տահի, մենք չպետք է թույլ տանք վոչ-քննադատական
վերաբերմունք դեպի այն հին հասկացողութիւնները,
վորոնք անկիրառելի յեն միջազգային նոր իրադրու-
թյան մեջ:

Այսպէս է դատաւորվել միջազգային իրադրու-
թյունը վերջին ժամանակաշրջանում:

Անցնենք իրեն իսկ՝ Խորհրդային Միութեան արտա-
քին դրութեան մեջ կատարված փոփոխութիւններին:
Այստեղ կատարվել են վոչ-փոքր փոփոխութիւններ,
բայց, յետևելով խոսքի մասին, ապա չի կա-
րելի չխոստովանել հետևյալը. մեր արտաքին խաղա-
ղութեան քաղաքականութիւնը հետևողականորեն կի-
րառելու չնորհիվ մեզ հաջողվեց զգալիորեն ուժեղացո-
նել մեր դիրքերը և Խորհրդային Միութեան միջազ-
գային կշիռը: (Յերկարատև ծախսարուքիւններ):

Մեր հարաբերութիւնները Գերմանիայի հետ,
ինչպէս յեն արդեն ասացի, բարելավվել են արմատա-
պէս: Այստեղ բանը զարգանում էր բարեկամական հա-
րաբերութիւնների ամրացման, պրակտիկ համագոր-
ծակցութեան զարգացման և Գերմանիային՝ խաղաղու-
թեան նրա ձգտումների մեջ քաղաքական աջակցու-
թիւն ցույց տալու գծով: Խորհրդային Միութեան և
Գերմանիայի միջև կնքված չհարձակելու պայմանա-
գիրը մեզ պարտաւորեցնում էր չեզոքութիւն պահ-
պանել այն դեպքում, յերբ Գերմանիան մասնակցի
պատերազմին: Մենք հետևողականորեն վարում էինք
այդ դիմը, վորին բնավ չի հակասում մեր զորքերի
մուտքը նախկին Լեհաստանի տերիտորիան, վոր սկը-
վեց սեպտեմբերի 17-ին: Բաւական է հիշեցնել, վոր

այդ ժամանակ հենց, սեպտեմբերի 17-ին, Խորհրդա-
յին կառավարութիւնը հատուկ նոտա ուղարկեց այն
բոլոր պետութիւններին, վորոնց հետ նա ունի դիվա-
նագիտական հարաբերութիւններ, հայտարարելով այն
մասին, վոր ԽՍՀՄ-ն այսուհետեւ էլ չեզոքութեան քա-
ղաքականութիւն կվարի նրանց հետ ունեցած հարա-
բերութիւնների մեջ: Ինչպէս հայտնի յե, մեր զորքե-
րը Լեհաստանի տերիտորիան մտան այն բանից հետո
միայն, յերբ լեհական պետութիւնը քայքայվեց և
փաստորեն դադարեց գոյութիւն ունենալուց: Այդ-
պիսի փապտերի նկատմամբ մենք չեզոք մնալ, հասկա-
նալի յե, չեյինք կարող, քանի վոր այդ իրադարձու-
թիւնների հետևանքով մեր առջև ծագացան մեր պե-
տութեան անվտանգութեան սուր հարցերը: Բացի այդ,
Խորհրդային կառավարութիւնը չէր կարող հաշվի
չառնել այն բացառիկ դրութիւնը, վոր ստեղծվել էր
Արևմտեան Ռեկրահնայի և Արևմտեան Բեռլոուսիայի
յեղքայրական բնակչութեան համար, վորը քայքայված
Լեհաստանում գտնվեց բախտի քմահաճույքին թող-
նովամ:

Հետագա իրադարձութիւնները լիովին հաստա-
տեցին, վոր խորհրդային-գերմանական նոր հա-
րաբերութիւնները կառուցված են փոխադարձ շահե-
րի ամուր բաղայի վրա: Այն բանից հետո, յերբ կար-
միր բանակի զորամասերը մտան նախկին լեհական պե-
տութեան տերիտորիան, ԽՍՀՄ և Գերմանիայի պետա-
կան շահերի սահմանադժման լուրջ հարցեր ծագեցին:
Սյդ հարցերն արագորեն կարգաւորվեցին փոխադարձ
համաձայնութեամբ: ԽՍՀ Միութեան և Գերմանիայի
միջև բարեկամութեան ու սահմանի գերմանո-խորհրդ-
ային պայմանադիրը, վոր կնքվեց սեպտեմբերի վեր-

Ներին, ամբաստանողն մեր հարաբերությունները գերմանական պետութեան հետ:

Գերմանիայի հարաբերություններն արեւմտա-յեւ-րոպական բուրժուական մյուս պետութեաններէ հետ վերջին յերկու տասնամյակի ընթացքում բնորոշվում էին, ամենից առաջ, Գերմանիայի ձգտմամբ՝ փրշ-րելու Վերսալյան պայմանագրի շղթաները, վորոնց ստեղծողը յեղել էին Անգլիան ու Ֆրանսիան՝ Ամերի-կայի Միացյալ Նահանգների ակտիվ մասնակցու-թյամբ: Այդ ել հենց, վերջին հաշվով, հասցրեց Յեւ-րոպայում բռնկած ներկայիս պատերազմին:

Խորհրդային Միութեան հարաբերությունները Գերմանիայի հետ կառուցվում էին այլ հիմքի վրա, վորն ընդհանուր վոչինչ չուներ հետպատերազմյան վերսալյան սիտեմի հալեթացման շահերի հետ: Մենք միշտ յեղել ենք այն կարծիքին, վոր ուժեղ Գեր-մանիան հանդիսանում է Յեւրոպայում հաստատուն խաղաղութեան անհրաժեշտ պայմանը: Միծաղելի կլի-ներ կարծել, թե Գերմանիային կարելի յե «ուղղակի դուրս բերել շարքից» և հաշի չառնել: Այդ տիմար ու վտանգավոր իդքը փայփայող տերութեանները հաշ-վի չեն առնում Վերսալի տխուր փորձը, իրենց հաշիվ չեն տալիս Գերմանիայի աճած հզորութեան մասին և չեն հասկանում, վոր Վերսալի կրկնման փորձը ներ-կայիս միջազգային իրադրութեան գեպըում, վորն ար-մատապես տարբերվում է 1914 թվականի իրադրու-թյունից, — կարող է վերջանալ նրանց համար կրախով:

Մենք անչեղորեն ձգտում էինք Գերմանիայի հետ հարաբերութեաններէ բարելավման և ամեն կերպ վող-ջունում էինք այդ տեսակի ձգտումները բուն Գերմա-նիայում: Այժմ մեր հարաբերութեանները գերմանա-

կան պետութեան հետ կառուցված են բարեկամական հարաբերութեաններ, Գերմանիայի խաղաղութեան ձգտումներին աջակցելու պատրաստակամութեան բա-ղայի վրա և, դրա հետ միասին, խորհրդային-գերմա-նական տնտեսական հարաբերութեաններէ զարգաց-մանն ամեն կերպ ոժանդակելու ցանկութեան վրա՝ հողուտ յերկու պետութեաններէ փոխադարձ շահերի: Պետք է հատկապես նշել, վոր խորհրդային-գերմանա-կան հարաբերութեաններէ մեջ տեղի ունեցած փոփո-խութեանները՝ քաղաքական բնագավառում բարե-նպատ նախադրյալներ ստեղծեցին խորհրդային-գեր-մանական տնտեսական հարաբերութեաններէ զարգաց-ման համար: Գերմանական գեղեցկայի վերջին տրն-տեսական բանակցութեանները Մոսկվայում, և խոր-հրդային տնտեսական գեղեցկայի ներկայումս տեղի ունեցող բանակցութեանները Գերմանիայում՝ լայն բազա յեն նախադատրաստում Խորհրդային Միու-թեան և Գերմանիայի միջև ասպրանքաշրջանառութեան զարգացման համար:

Այժմ թույլ տվեք կանոց յոռնել այն իրադարձու-թեաններէ վրա, վորոնք անմիջականորեն կապված են նախկին լեհական պետութեան տերիտորիան մեր դոբ-բերի մուտք գործելու հետ: Անհրաժեշտութեան չկա, վոր յես նկարագրեմ այդ իրադարձութեաններէ բն-թացքը: Այդ բոլորի մասին մանրամասն խոսվել է մեր մամուլում, և դուք, ընկեր գեպուտատներ, լավ ծանոթ էք փաստական կողմին: Կասեմ միայն ամենաեսականի մասին:

Հարկ չկա ապացուցելու, վոր լեհական պետու-թեան լիակատար քայքայման մոմենտին մեր կառու-վարութեանը պարտավոր եր ոգնութեան ձեռք մեկնել


Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիայում բնակվող յեղբայր-ուկրաինացիներին ու յեղբայր-բելոռուսներին: Նա այդպես էլ վարվեց: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, դեպուտատները վառփի յեմ կանգնում և ուլացիա յեմ սարբում): Կարմիր բանակն այդ շրջանները մտալ ուկրաինական և բելոռուսական բնակչության ընդհանուր համակրանքի պայմաններում, բնակչության, վորը մեր գործերին ղեմավորում էր վորպես պանական ճընչումից, լեհական կարթածատերերի ու կապիտալիստների ճնշումից իրեն ազատազրոյնների:

Այդ շրջաններում Կարմիր բանակի մարտական առաջնադասման ժամանակ մեր գործառասերը վորոշ տեղերում լուջ ընդհարումներ ունեցան լեհական գործառասերի հետ, իսկ այդ նշանակում է, վոր յեղան նաև գոհեր: Թե ինչպիսին էյին այդ գոհերը, յերևում է հետևյալից: Բելոռուսական Փրոնտում Կարմիր բանակի գործառասերում, հաշված պետկազմն ու շարքային կազմը, մենք ունեցանք 246 սպանված և 503 վիրավոր, իսկ ընդամենը՝ 749: Ուկրաինական Փրոնտում մենք պետկազմից ու շարքային կազմից ունեցանք 491 սպանված և 1359 վիրավոր, իսկ ընդամենը՝ 1850: Հետևապես, Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայում Կարմիր բանակի կրած գոհերի ընդհանուր թիվը կազմում է—սպանվածներ՝ 737, վիրավորներ՝ 1862, այսինքն, ամբողջությամբ՝ 2599 մարդ: Ինչ վերաբերում է լեհաստանում մեր գրաված մարտական ավարին, ապա դրանք կազմում են 900-ից ավելի թնդանոթ, ավելի քան 10 000 զենդայիր, ավելի քան 300 հազար հրացան, ավելի քան 150 միլիոն հրացանի փամփուշտ, մոտավորապես 1

միլիոն հրետանային արկ, մոտ 300 ինքնաթիռ և այլն: ԽՍՀ Միությանն անցած տերիտորիան իր չափերով հավասար է յեկրոպական մի մեծ պետության տերիտորիայի: Այսպես, Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիան հասնում է 108 հազար քառակուսի կիլոմետրի, 4 միլիոն 800 հազար բնակչությամբ: Արևմտյան Ուկրաինայի տերիտորիան կազմում է 88 հազար քառակուսի կիլոմետր 78 միլիոն բնակչությամբ: Այսպիսով, մեզ անցած՝ Արևմտյան Ուկրաինայի տերիտորիան Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիայի հետ միասին կազմում է 196 հազար քառակուսի կիլոմետր, իսկ նրա բնակչույունը՝ մոտ 13 միլիոն մարդ, վորից ուկրաինացիներ—ավելի քան 7 միլիոն, բելոռուսներ—ավելի քան 3 միլիոն, լեհեր—ավելի քան 1 միլիոն, հրեաներ—ավելի քան 1 միլիոն:

Այդ իրադարձությունների քաղաքական նշանակությունը դժվար է գերազնահատել: Արևմտյան Ուկրաինայից և Արևմտյան Բելոռուսիայից ստացվող բոլոր հաղորդադրությունները վկայում են, վոր բնակչությունն աննկարազրեյի ցնծությամբ ղեմավորեց իր ազատազրումը պանակուն ճնշումից և ջերմալին վողջունեց խորհրդային իշխանության նոր մեծ հաղթանակը: (Յերկարատև ծափահարությունների պոռկում): Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովների՝ վերջին օրերս տեղի ունեցած ընտրությունները, վորոնք այդպեղ առաջին անգամ կազմակերպված էյին ընդհանուր, ուղղակի, հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ դադանի քվեարկությամբ, ցույց տվին, վոր այդ մարդերի բնակչության առնվազն իննը տասերորդ մասը վաղուց արդեն նախապատրաստված էր Խորհրդային Միութ-

1-369494



թյան հետ վերամիավորվելու համար: Լվովում և Բելոռատիում ժողովրդական ժողովների ընդունած վորսչումները, վորոնք այժմ արդեն հայանի յեն բուլոբիս, վկայում են ժողովրդական ընտրյալների լիակատար միահամուտությունը քաղաքական բոլոր հարցերում:

Անցնենք մեր հարաբերություններին՝ մերձբալթյան յերկրներին՝ հետ: Ինչպես հայանի յե, այստեղ ևս ակզի յեն ունեցել է յական փոփոխություններ:

Յատնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ Խորհրդային Միության հարաբերություններն հիմքում դրոնրվում են խաղաղության համապատասխան սրայմանակները, վորոնք կնքվել է յին 1920 թվին: Այդ սրայմանակների համաձայն Յատնիան, Լատվիան և Լիտվան ստացան ինքնուրույն սետական դոյություն, բստվորում անցած ամբողջ ժամանակաշրջանում Խորհրդային Միությունն անփոփոխ կերպով բարեկամական քաղաքականություն էր վարում այդ, նոր ստեղծված, վորք սետությունների վերարեմամբ: Դրանում իր սրտահայտությունը պտավ խորհրդային իշխանության քաղաքականության արմատական տարբերությունը ցարական Ռուսաստանի քաղաքականությունից, վորը դադանաբար կեղեքում էր ինքը ժողովուրդներին, նրանց չէր ստղիս ինքնուրույն ազգային-պետական դարգացման վորևե հնարավորություն և նրանց մեջ թողել է շատ ծանր հիշողություններ: Պետք է ընդունել, վոր խորհրդային-ետոնական, խորհրդային-բատվիական և խորհրդային-լիտվական բարեկամական հարաբերությունների զարգացման անցած յերկու տասնամյակների վորձը բարենպաստ նախադրյալներ ստեղծեց մերձբալթյան յերկրների հետ ԽՍՀՄ քաղա-

քական ու ամեն տեսակ այլ հարաբերությունների հետադա ամրապնդման համար: Այդ ցույց տվին նակ վերջին դիվանագիտական բանակցություններն Յատնիայի, Լատվիայի ու Լիտվայի ներկայացուցիչներին հետ և այն սրայմանագրերը, վորոնք ստորագրվեցին Մոսկվայում՝ այդ բանակցություններին հետևանքով:

Դուք գիտեք, վոր Խորհրդային Միությունն Յատնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ կնքել է փոխադարձ ոգնության այնպիսի պակտեր, վորոնք ունեն քաղաքական խոչորագույն նշանակություն: Այդ պակտերի սկզբունքային հիմքը նույնն է: Դրանք հիմնված են փոխադարձ ոգնության վրա, մեկ կողմից՝ Խորհրդային Միության, և մյուս կողմից՝ Յատնիայի, Լատվիայի ու Լիտվայի միջև, ներառյալ միմյանց նակ ոսղմական ոգնություն ցույց տալը՝ նրանցից վորևե մեկին վրա հարձակում կատարվելու դեպքում: Այդ յերկրների աշխարհագրական առանձնահատուկ դիրքի շնորհիվ, յերկրներ, վորոնք յուրատեսակ մատույցներ են հանդիսանում դեպի ԽՍՀՄ, հատկապես Բալթիկ ծովի կողմից, այդ պակտերը Խորհրդային Միությանը հնարավորություն են տալիս ոսղմ-ծոփային բազաներ և ողանավակայաններ ունենալու Յատնիայի և Լատվիայի վորոշ կետերում, ինկ Լիտվայի վերարեմամբ սահմանում են լիտվական սահմանի համատեղ պաշտպանությունը Խորհրդային Միության հետ: Խորհրդային այդ սողմ-ծոփային բազաների և ողանավակայանների ստեղծումն Յատնիայի, Լատվիայի ու Լիտվայի տերիտորիայում և վորոշ քանակությամբ կարմիր-բանակային զորամասերի փոխադրումն այդ բազաների ու ողանավակայանների պահպանման համար—սպահովում են պաշտպանու-

թյան հուսալի հենարանը վոչ միայն խորհրդային Մի-
ության համար, այլև հենց մերձբալթյան պետու-
թյուններին համար, և դրանով իսկ ծառայում են խա-
ղաղության պահպանման գործին, վորում շահադը-
գույթ են մեր ժողովուրդները:

Յոտոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ վերջին
ժամանակներս տեղի ունեցած դիվանագիտական բա-
նակցությունները ցույց տվին, վոր մեր միջև գոյու-
թյուն ունի բավականաչափ վատահույժյուն և ռազմա-
պաշտպանական այդ միջոցառումների իրականացման
անհրաժեշտության հարկ յեղած ըմբռնում, յեղներով
ինչպես խորհրդային Միության, այնպես և հենց այդ
պետությունների շահերից: Բանակցությունների ըն-
թացքում լիովին յերևան յեկավ դրանց մասնակիցների
ձգտումը՝ պահպանելու խաղաղությունը և ապահովե-
լու անվտանգությունը խաղաղ աշխատանքով զբաղ-
ված մեր ժողովուրդների համար: Այդ բոլորն ել հենց
ապահովեցին բանակցությունների հաջող ավարտումը
և փոխադարձ ոգնության պակտերի կնքումը, վորոնք
ունեն պատմական կարևոր նշանակություն:

Փոխադարձ ոգնության հիշյալ պակտերի հատուկ
բնույթը բնավ չի նշանակում խորհրդային Միության
վորեն միջամտություն Յոտոնիայի, Լատվիայի և Լիտ-
վայի գործերին, ինչպես այդ փորձում են պատկերաց-
նել արտասահմանյան մամուլի վորոշ օրգաններ: Ընդ-
հակառակը, փոխադարձ ոգնության այդ բոլոր պակ-
տերը հաստատապես վերաբահություն են անում
դրանք ստորագրող պետությունների սուվերենի-
տետի անձեռնմխելիության և մյուս պետության
գործերին չմիջամտելու սկզբունքի մասին: Այդ
պակտերը յեղում են մյուս յերկրի պետական

սոցիալական ու տնտեսական ստրուկտուրան փո-
խադարձաբար հարգելուց և պետք է ամրապնդեն
մեր ժողովուրդների միջև խաղաղ բարի-դրացիա-
կան համագործակցության հիմքը: Մենք կողմնա-
կից ենք կնքված պակտերի արդիվ և կետադեմ կեն-
սագործմանը՝ լիակատար փոխադարձության պայման-
ներով և հայտարարում ենք, վոր մերձբալթյան յեր-
կրների խորհրդայնացման մասին յեղած շաղկերա-
տությունը ձեռնտու յե միայն մեր ընդհանուր թշնա-
միներին ու հակախորհրդային ամեն տեսակ պրոպ-
կատորներին:

Յոտոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ քաղաքա-
կան հարաբերությունների՝ ձեռք բերված բարելավման
հիման վրա խորհրդային Միությունը յայնորեն ընդա-
ռաջ գնաց այդ պետությունների տնտեսական կա-
րիքներին, կնքելով համապատասխան առևտրական
համաձայնություններ: Այդ տնտեսական համաձայնու-
թյունները կապակցությամբ ապրանքաշրջանառու-
թյունը մերձբալթյան յերկրների հետ աճում և մի քանի
անգամ և ունի բարենպաստ հետևանք՝ հետագա աճ-
ման համար: Այն պայմաններում, յերբ յեվրոպական
բոլոր յերկրների, այդ թվում նաև չեզոք պետու-
թյունների առևտուրն ապրում է հսկայական դժվա-
րություններ, ԽՍՀՄ յայդ տնտեսական համաձայնու-
թյուններն Յոտոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ՝
նրանց համար ունեն չափազանց խոշոր դրական նշա-
նակություն:

Այսպիսով, այն մերձեցումը, վոր տեղի յե ունե-
ցել ԽՍՀՄ, Յոտոնիայի, Լատվիայի և Լիտվայի միջև,
կնպաստի մերձբալթյան մեր հարևանների դյուղա-
տնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի

արազ վերելքին և առհասարակ ժողովրդական բարեկեցութեանը:

Փոքր յերկրներն վերաբերմամբ խորհրդային քաղաքականութեան սկզբունքները հատուկ ուժով ցուցաբերված են Վիլնո քաղաքը և Վիլնոյի մարզը Լիտվական հանրապետութեանը հանձնելու պայմանագրի սրինակով: Ընդամեն Լիտվական պետութեանը՝ իր յերկու և կես միլիոն բնակչութեամբ, զգալիորեն ընդարձակում է իր տերիտորիան, 550 հազար մարզով ավելացնում է իր բնակչութեանը և ստանում է Վիլնո քաղաքը, վորի բնակիչներն թիվը համարյա յերկու անգամ գերազանցում է լիտվական ներկայիս մայրաքաղաքի բնակչութեանից: Խորհրդային Միութեանը ղիմեց Վիլնո քաղաքը Լիտվական հանրապետութեանը հանձնելու քայլին վոչ այն պատճառով, վոր նրանում գերակշռում է լիտվական բնակչութեանը: Վո՛չ, Վիլնոյում մեծամասնութեան է կազմում վոչ-լիտվական բնակչութեանը: Բայց խորհրդային կառավարութեանը հաշվի առավ այն, վոր Վիլնո քաղաքը, վորը Լեհաստանը բուն կերպով խլել էր Լիտվայից, պետք է պատկանի Լիտվային վորպես մի քաղաք, վորի հետ կապված են մեկ կողմից՝ Լիտվական պետութեան պատմական անցյալը, իսկ մյուս կողմից՝ լիտվական ժողովրդի ազգային իղձերը: Արտասահմանյան մասուլում մատնանշվում էր, թե համալսարհային պատմութեան մեջ գեո չի յեղել այնպիսի դեպք, վոր մեծ պետութեանն իր սեփական կամքով վորք պետութեանը տար այդպիսի մի մեծ քաղաք: Խորհրդային պետութեան այդ սկսն առավել վառ կերպով է ցուցադրում նրա բարե կամքը:

Հատուկ դրութեան մեջ են գտնվում մեր հարաբե-

րութեանները Ֆինլանդիայի հետ: Դա բացատրվում է, գլխավորապես, նրանով, վոր Ֆինլանդիայում ավելի մեծ չափով են զբսեորվում դանազան տեսակ արտաքին ազդեցութեանները՝ յերրորդ տերութեաների կողմից: Մակայն, անաչառ մարդիկ պետք է խոստովանեն, վոր Խորհրդային Միութեան է, հակապես, Լենինգրադի անվտանգութեանն ապահովելու նույն այն հարցերը, վորունք ծառայած էլին Եստոնիայի հետ տեղի ունեցած բանակցութեաններում, ծառայած են նաև Ֆինլանդիայի հետ տեղի ունեցող բանակցութեանների մեջ: Կարելի չէ ասել, վոր վորոչ տեսակետից Խորհրդային Միութեան համար անվտանգութեան հարցերն այստեղ ծառայած են նույնիսկ ավելի սուր, քանի վոր Խորհրդային պետութեան՝ Մոսկվայից հետո գլխավոր քաղաք Լենինգրադը գերանրվում է Ֆինլանդիայի սահմանից ընդամենը 32 կիլոմետր հեռավորութեան վրա: Այդ նշանակում է, վոր Լենինգրադը գտնվում է այլ պետութեան սահմանից ավելի վորք հեռավորութեան վրա, քան թե այդ անհրաժեշտ է ժամանակակից հեռաձիգ թողանոթներից հրետանային զնդակոծման յենթարկելու համար: Մյուս կողմից, դեպի Լենինգրադ տանող ծովային մատուցները նույնպես զգալի չափով կախված են այն բանից—թշամակա՞ն, թե՞ բարեկամական դիրք է դրավում Խորհրդային Միութեան վերաբերմամբ Ֆինլանդիան, վորին պատկանում է Ֆիննական ծոցի ավերի ամբողջ հյուսիսային մասը և Ֆիննական ծոցի կենտրոնական մասի յերկարութեամբ ընկած բոլոր կղզիները:

Հաշվի առնելով այսպիսի դրութեանը, ինչպես նաև Յեկրոպայում ստեղծված իրադրութեանը, կարե-

լի յե հուսալ, վոր Ֆինլանդիան կցուցարբրի հարկ յեղած ըմբռնում :

Ինչի՞ վրա յեն հիմնված յեղել Խորհրդային Միության հարաբերությունները Ֆինլանդիայի հետ այս բոլոր տարիների ընթացքում : Հայտնի յե, վոր այդ հարաբերությունների հիմքը հանդիսանում ե 1920 թվի խաղաղության պայմանագիրը, վորը նույնատիպ ե բալթիական մեր մյուս հարևանների հետ ունեցած մեր պայմանագրերին : Խորհրդային Միությունը իր կամքի ազատ արտահայտությամբ ապահովեց Ֆինլանդիայի ինքնուրույն ե անկախ գոյությունը : Տարակույս լինել չի կարող, վոր միայն Խորհրդային կառավարությունը, վորը ճանաչում ե ազգությունների ազատ զարգացման սկզբունքը, կարող եր գիմել այդպիսի քայլի : Պետք ե ասել, վոր միջ մի կառավարություն Ռոսասասանում, բացի Խորհրդայինից, չի կարող հանդուրժել անկախ Ֆինլանդիայի գոյությունը հենց ճիշտ Լենինգրադի դարպասների մոտ : Այդ մասին պերճախոս վկայում ե կերեհակու—Մերեթեյու «ղեմսկրատական» կառավարության փորձը, եյ չենք խոսում իշխան Լվովի—Միլյուկովի կառավարության մասին ե, առպիկ ես, ցարական կառավարության մասին : Տարակույս չկա, վոր այս կարևոր հանգամանքը կարող եր ծառայել վորպես լավ նախադրյալ՝ Խորհրդային—Ֆիննական հարաբերությունների բարելավման համար, վորում, ինչպես յերևում ե, Ֆինլանդիան շահադրդոված ե վո՛չ պակաս, քան Խորհրդային Միությունը :

Խորհրդային—Ֆիննական բանակցություններն սկսվեցին վերջերս, մեր նախաձեռնությամբ : Ի՞նչն ե հանդիսանում այդ բանակցությունների առարկան :

Դժվար չե հասկանալ, վոր Ժամանակակից միջազգային իրադրության մեջ, յերբ ՅՎրոպայի կենտրոնում ծավալվում ե պատերազմը խոչորակույն պետությունների միջև, վորը հղի յե մեծ անակնկալներով ու վտանգներով յեվրոպական բոլոր պետությունների համար,—Խորհրդային Միությունը վոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր ե լուրջ միջոցներ ձեռք առնել իր անվտանգությունն ամբապնդելու համար : Ըստվորում բնական ե, վոր Խորհրդային կառավարությունը հատուկ հոգատարություն ե ցուցաբերում Ֆիննական ծոցի վերաբերմամբ, վորը հանդիսանում ե ծովային մատույց՝ դեպի Լենինգրադ, ինչպես նաև ցամաքային այն սահմանի վերաբերմամբ, վորն ինչ—վոր մի 30 կիլոմետր հեռավորությամբ կախված ե Լենինգրադի վրա : Յես հիշեցնեմ, վոր Լենինգրադի բնակչությունը հասել ե յերեք ե կես միլիոնի, վորը համարյա թե հավասար ե ամբողջ Ֆինլանդիայի բնակչությանը, վորը կազմում ե 3 միլիոն 650 հազար մարդ : (Ուրախ աշխուժություն դառնիմուս) :

Հազիվ թե հիմք կա կանգ առնելու այն հերյուրանքների վրա, վոր արտասահմանյան մամուլը տարածում ե Ֆինլանդիայի հետ տեղի ունեցող բանակցությունների ընթացքում Խորհրդային Միության առաջարկների մասին : Վոմանք պնդում են, թե ԽՍՀՄ «պահանջում ե», վոր իրեն տրվի Վիպուրի (Վիբորգ) քաղաքը ե Լադոգա լճի հյուսիսային մասը : Մեր կողմից կասեմք, վոր դա գուտ հնարովի բան ե ե սուտ : Մյուսները պնդում են, թե ԽՍՀՄ «պահանջում ե», վոր իրեն հանձնվեն Ալանդյան կղզիները : Դա նույնպես հնարովի բան ե ե սուտ : Եաղակրատում են նաև ինչ—վոր պրետենդիաների մասին, վոր Խորհրդային

Միությունն իրր թե ունի Եվեղիայի և Նորվեգիայի վերաբերմամբ: Բայց այդ հանդուգն ստախոսությունն ուղղակի արժանի էլ չե հերքման: (Ընդհանուր ծիծաղ): Իրականում, մեր առաջարկները Ֆինլանդիայի հետ տեղի ունեցող բանակցությունների ընթացքում առավելագույն չափով համեստ են և սահմանափակվում են այն միխմումով, առանց վորի անհնարին և ապահովել իՄՂՄ անվտանգությունը և բարեկամական հարաբերություններ ստեղծել Ֆինլանդիայի հետ:

Բանակցությունները Ֆինլանդիայի ներկայացուցիչներին հետ, վորի համար Ֆինլանդական կառավարությունը Մոսկվա դործուղեց պ. պ. Պասսիկիվիին և Տաններին, մենք սկսեցինք փոխադարձ ոգնության խորհրդային-Ֆիննական պակտ կնքելու առաջարկով, մոտավորապես փոխադարձ ոգնության այն պակտերի տիպով, վոր մենք ունենք Մերձբալթյան մյուս պետություններին հետ: Սակայն, քանի վոր Ֆինլանդական կառավարությունը հայտարարեց մեզ, թե այդպիսի պակտի կնքումը կհակասի բացարձակ չեզոքության իր դրամած դիրքին, մենք չպնդեցինք մեր առաջարկի վրա: Այն ժամանակ մենք առաջարկեցինք անցնել այն կոնկրետ հարցերին, վորոնցով մենք շահագրգռված ենք իՄՂ Միության անվտանգությունը, և, հատկապես, Լենինգրադի անվտանգությունն ապահովելու տեսակետից, ինչպես ծովի կողմից՝ Ֆիննական ծոցում, այնպես և ցամաքի կողմից՝ նկատի ունենալով սահմանազժի չափազանց մոտիկությունը Լենինգրադին: Մենք առաջարկեցինք համաձայնության դալ այն մասին, վորպեսզի Լենինգրադից հյուսիս խորհրդային-Ֆիննական սահմանը մի քանի տասնյակ կիլոմետրով հետ մղվի Կարելյան պարանոցում: Դրա վո-

խարեն մենք առաջարկեցինք Ֆինլանդիային հանձնել իր հրադային Կարելիայի տերիտորիայի մի մասը, վորը կրկնակի չափով գերազանցում է Ֆինլանդիայի կողմից իր հրադային Միությանը հանձնվելիք տերիտորիային: Մենք նաև առաջարկեցինք համաձայնության դալ այն մասին, վորպեսզի Ֆինլանդիան մեզ վորոշ ժամկետով կապալով տա իր տերիտորիայի մի փոքր մասը՝ Ֆիննական ծոցի մուտքի շրջանում, վորպեսզի մենք կարողանանք այնտեղ կազմակերպել ռազմա-ծովային բազա: Ֆիննական ծոցի հարայային մուտքի մոտ, այն է՝ Բալթիական նավահանգստում խորհրդային ռազմա-ծովային բազայի առկայության դեպքում, ինչպես այդ պայմանավորված է փոխադարձ ոգնության խորհրդային-կեսոնական պակտով, Ֆիննական ծոցի հյուսիսային մուտքի մոտ ռազմա-ծովային բազայի ստեղծումը կարող էր լինվին ապահովել Ֆիննական ծոցի անվտանգությունը՝ մյուս պետություններին կողմից թշնամական վրտանդություններին հանդեպ: Մենք չենք տարակուսում, վոր այդպիսի բազայի ստեղծումը համապատասխանում է վոր միայն իր հրադային Միության շահերին, այլ և հենց Ֆինլանդիայի անվտանգությանը: Մեր մյուս առաջարկները և, մասնավորապես, մեր առաջարկը Ֆիննական ծոցում յեղած մի քանի կղզիներին, ինչպես նաև Ռիբաչի ու Սրեդնի թերակղզիներին մի մասի տերիտորիան իր հրադային Կարելիայում իր չափերով կրկնակի տերիտորիայի հետ փոխանակելու մասին, բոտ յերևութին, առարկության չեն հանդիպում Ֆինլանդական կառավարության կողմից: Մեր վորոշ առաջարկներին վերաբերմամբ տարաձայնությունները դեռ վերացված չեն, իսկ այդ տեսակետից Ֆինլան-

դիպի կատարած զիջումները, որինակ՝ տերխոորիայի մասնակի զիջումը Կարելյան պարանոցում, բացահայտորեն չեն հասնում նպատակին:

Այնուհետև, մենք կատարեցինք մի շարք նոր քայլեր՝ Ֆինլանդիային ընդառնջելու խմայտով: Մենք ասացինք, վոր յեթե ընդունվեն մեր հիմնական առաջարկները, ապա մենք պատրաստ ենք վերացնել մեր առարկություններն Ալանդյան կղզիների սպառազինման դեմ, մի բան, վորը վաղուց արդեն պնդում է Ֆինլանդական կառավարությունը: Մենք միայն վերապահում արինք, վոր մենք վերացնում ենք մեր առարկություններն Ալանդյան կղզիների սպառազինման նկատմամբ այն պայմանով, վոր հիշյալ սպառազինումները կատարվեն իրեն՝ Ֆինլանդիայի ազդային ուժերով և վոր այդ սպառազինումներին յերրորդ յերկրները չունենան վորեւէ մասնակցություն, քանի վոր ԽՍՀՄ-ը ևս չի մասնակցում դրանց: Մենք նաև առաջարկեցինք Ֆինլանդիային՝ Կարելյան պարանոցում խորհրդային-ֆիննական ամբողջ սահմանի վրա կատարել ամբողջապես շրջանների դինամիզում, վորը պետք է ամբողջապես համապատասխանի Ֆինլանդիայի շահերին: Այնուհետև, մենք ցանկություն հայտնեցինք չհարձակվելու խորհրդային-ֆիննական պակտն ուժեղացնել լրացուցիչ մոխադարձ յերաշխիքներով: Վերջապես, խորհրդային-ֆիննական քաղաքական հարաբերությունների ամրապնդումն, անտարակույս, կհանդիսանար հիանալի բազա նաև մեր յերկրների միջև տնտեսական հարաբերությունների արագ վերելքի համար:

Այսպիսով, մենք պատրաստ ենք ընդառնջ զնալ

Ֆինլանդիային այն հարցերում, վորոնց մեջ նա առանձնապես շահագրգռված է:

Այս բոլորից հետո մենք չենք կարծում, վոր Ֆինլանդիան սկսի առիթ վորոնել յենթադրվող համաձայնությունը վիժեցնելու համար: Այդ չեր համապատասխանի խորհրդային-ֆիննական բարեկամական հարաբերությունների քաղաքականությանը և, իհարկե, յուրջ միաս կհասցներ Ֆինլանդիային:

Մենք հավատացած ենք, վոր Ֆինլանդիայի ղեկավար շրջանները ճիշտ կհատկանան խորհրդային-ֆիննական բարեկամական հարաբերությունների ամրապնդման նշանակությունը, և Ֆինլանդական գործիչները չեն յենթարկվի հակախորհրդային վորեւէ ճնշման ու հրահրման, թեկուզ ում կողմից ել լինի այդ:

Սակայն, յես պետք է հաղորդեմ, վոր նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտը տեղին զտալ միջամտել այդ հարցերին, մի բան, վորը դժվար է համաձայնեցնել ամերիկյան չեզոքության քաղաքականության հետ: Հոկտեմբերի 12-ին Գերազույն Խորհրդի Նախագահության Նախագահ ընկ. Կալինինի անունով ուղարկած իր դիմումի մեջ պ. Ռուզվելտը հույս հայտնեց ԽՍՀՄ և Ֆինլանդիայի միջև բարեկամական ու խաղաղ հարաբերությունների պահպանման և զարգացման վերաբերմամբ: Կարելի չե կարծել, վոր Ամերիկայի Միացյալ Նահանգների գործերն ավելի լավ են, ասենք, Ֆիլիպպինյան կղզիների կամ Կուբայի հետ, վորոնք վաղուց ԱՄՆ-ից պահանջում են ազատություն ու անկախություն և չեն կարողանում դրանք ստանալ, քան թե Խորհրդային Միության գործերը Ֆինլանդիայի հետ, վորը վաղուց արդեն Խոր-

հըրդային Միությունից ստացել և և՛ ադատություն,
և՛ պետական անկախություն:

Պրն Ռուզվելտի զիմուսին ընկեր Կալինինը պա-
տասխանեց հետևյալ կերպ.

«Տեղին եմ համարում հիշեցնել Ձեզ, պարոն
Պրեզիդենտ, վոր Ֆինլանդական հանրապետու-
թյան պետական անկախությունը ճանաչվել է
Սորհրդային Կառավարության կամքի ազատ
արտահայտմամբ 1917 թվի դեկտեմբերի
31-ին, և վոր Ֆինլանդիայի սուվերենիտետն
ապահովված է ՌԽՖՍՀ ու Ֆինլանդիայի միջև
կնքված 1920 թվի հոկտեմբերի 14-ի հաշտու-
թյան պայմանագրով: Սորհրդային Կառավա-
րության հիշյալ ակտերով վորոշված են Սոր-
հրդային Միության և Ֆինլանդիայի միջև
փոխհարաբերությունների հիմնական սկզբունք-
ները: Այդ սկզբունքներին համապատասխան են
պարվում նաև ներկայիս բանակցությունները
Սորհրդային Կառավարության ու Ֆինլանդիայի
կառավարության միջև: Հակառակ այն շրջան-
ների կողմից տարածվող տենդենցիոզ վերոխա-
ների, վորոնք, ըստ յերևութին, շահադրդուված
չեն յեվրոպական խաղաղությամբ, հիշյալ բա-
նակցությունների միակ նպատակն է փոխհարա-
բերությունների ամրապնդումը Սորհրդային
Միության ու Ֆինլանդիայի միջև և յերկու
յերկրների բարեկամական համագործակցու-
թյան ամրապնդումը՝ Սորհրդային Միության
ու Ֆինլանդիայի անվտանգությունն ապահովե-
լու դործում»:

ԽՍՀՄ Գերագույն Սորհրդի Նախագահության Նա-

խաղահի այսպիսի պարզ պատասխանից հետո պետք է
միանդամայն հասկանալի լինի, վոր բարի կամքի առ-
կայության դեպքում Ֆինլանդական կառավարությու-
նը կընդառաջի մեր նվազագույն առաջարկներին, վո-
րոնք վոչ միայն չեն հակառում Ֆինլանդիայի ազա-
յին ու պետական շահերին, այլ ամրապնդում են նրա
արտաքին անվտանգությունը և լայն բազա յեն ստեղ-
ծում մեր յերկրների միջև քաղաքական ու անտեսա-
կան հարաբերությունների հետագա լայն զարգացման
համար:

Միքանի խոսք Թյուրքիայի հետ տեղի ունեցած
բանակցությունների մասին:

Այդ բանակցությունների ելության մասին ար-
տասահմանում գրում են ամեն տեսակ հերյուրանք-
ներ: Վոմանք պնդում են, թե ԽՍՀՄ-ն իրը պահան-
ջել է հանձնել Արդահանի և Ղարսի շրջանները: Մեր
կողմից կասենք, վոր այդ ամբողջապես հնարովի բան
է և սուտ: Մյուսները պնդում են, թե ԽՍՀՄ-ը պա-
հանջել է իրը թե փոփոխել Մոնտրեյում կնքված մի-
ջազային կոնվենցիան և ԽՍՀՄ համար գերակշիռ
իրավունքներ է պահանջել նեղուցների հարցում: Այդ
նույնպես հնարովի բան է և սուտ: Իրականում խոսքը
վերաբերում էր փոխադարձ ոգնության յերկկողմանի
պակտի կնքմանը, վորը սահմանափակված էր Մե. ծո-
վի և նեղուցների շրջաններով: ԽՍՀՄ-ը զանում էր,
վոր այդպիսի պակտի կնքումը չէ կարող նրան գրդել
այնպիսի գործողությունների, վորոնք կարողանային
նրան ներքաշել զինված կոնֆլիկտի մեջ Գերմանիայի
դեմ, այդ՝ մեկ, և վոր ԽՍՀՄ-ը պետք է յերաշխիք
ունենա, վոր պատերազմի սպառնալիքը նկատի ունե-

նալով, Թյուրքիան վոչ-սեծովյան պետութիւններէ
ասղմանալերէն թույլ չի տա Բոսֆորով անցնել Սև
ծովը, այդ՝ յերկրորդ: Թյուրքիան մերժեց իՍՂՄ այդ
յերկու վերապահումներն ել և դրանով իսկ անհնարին
զարձրեց պակտի կնքումը:

Խորհրդային-թյուրքական բանակցութիւնները
չհասցրին սշակտի կնքման, բայց դրանք ոգնեցին պար-
զելու կամ, համեմայն դեպս, շոչափելու մեզ հետա-
քըրքրող մի շարք քաղաքական հարցեր: Ժամանակա-
կից միջազգային իրադրութիւն մեջ հատկապես կա-
րևոր է ճանաչել այն պետութիւնների իսկական դեմ-
քըն ու քաղաքականութիւնը, վորոնց հետ հարաբե-
րութիւններն ունեն լուրջ նշանակութիւն: Թյուր-
քիայի քաղաքականութիւն մեջ մեզ համար այժմ շատ
բան դարձաւ շատ ավելի պարզ, ինչպես Մոսկիվայի
բանակցութիւնների հետեանքով, այնպես և թյուր-
քական կառավարութիւն արտաքին-քաղաքական վեր-
ջին ակտերի հետեանքով:

Ինչպես հայտնի յի, Թյուրքիայի կառավարութիւ-
նը զերադասեց իր բախտը կապել պատերազմին մաս-
նակցող յեվրոպական տերութիւնների վորոշ խմբա-
վորման հետ: Նա փոխադարձ ունութիւն սրակտ կնքեց
Անգլիայի ու Ֆրանսիայի հետ, վորոնք արդեն յերկու
ամիս է, ինչ պատերազմ են մղում Գերմանիայի դեմ:
Դրանով իսկ Թյուրքիան վերջնականապես դեն չարտեց
չեղոքութիւն զընդ քաղաքականութիւնը և մտալ
ծավարլող յեվրոպական պատերազմի որբիտայի մեջ:
Դրանից չախազանց դո՛հ են ինչպես Անգլիայում, այն-
պես և Ֆրանսիայում, վորոնք ուզում են ավելի մեծ
թիւով չեղոք յերկրներ ներդրալիլ պատերազմի իրենց
սփերայի մեջ: Թյուրքիան չի՞ ամտոսա արդյոք այդ

առթիւլ—գուշակութիւն չենք անի: (Դաիլիմում աշ-
խուժութիւն): Մեզ միայն մնում է նշել մեր հարեա-
նի արտաքին քաղաքականութիւն մեջ կատարված այս
նոր մոմենտները և ուշադիր հետեւել իրադարձու-
թիւնների զարգացմանը:

Յեթե Թյուրքիան այժմ վորոշ չափով կապել է իր
ձեռքերը և թեքվել է պատերազմող կողմերից մեկին
աջակցելու կողմը, վորը ռիսկոս բան է նրա համար,
ասլա ակնբախ է, վոր թյուրքական կառավարութիւնը
գիտակցում է այն պատասխանատուութիւնը, վոր
դրանով նա ստանձնեց: Բայց դա այն արտաքին քա-
ղաքականութիւնը չէ՛, վորին հետեւում է Խորհրդային
Միութիւնը, և վորի շնորհիւ Խորհրդային Միու-
թիւնն արդեն ապահովել է վոչ-քիչ թիւով արտաքին-
քաղաքական հաջողութիւններ: Խորհրդային Միու-
թիւնը զերադասում է այսուհետեւ ել իր ձեռքերն
ազատ թողնել, հետեոգականորեն կիրառել չեղոքութիւն
իր քաղաքականութիւնը և վոչ միայն չաջակցել պա-
տերազմի հրահրմանը, այլ աջակցել խաղաղութիւնը
վերականգնելու ուղղութիւնը յեղած ձգտումների ամ-
բասնումանը: Մենք հավատացած ենք, վոր խաղաղու-
թիւն այն քաղաքականութիւնը, վոր անչեղորեն վա-
րում է իՍՂՄ-ը, հետադարձ ևս ունի լալտողույն
հետանկարներ: Այդ քաղաքականութիւնը մենք կկի-
րառենք Սև ծովի շրջանում ևս, հավատացած լինելով,
վոր լիովին կապահովենք նրա հարկ յեղած կիրառու-
մը, ինչպես այդ պահանջում են Խորհրդային Միու-
թիւն և նրա հետ բարեկամ պետութիւնների շահերը:
(Ծափահարութիւններ):

Այժմ Յապոնիայի հետ մեր ունեցած հարաբերու-
թիւնների մասին:

Վերջին ժամանակներս խորհրդային-յապոնական հարաբերութիւնները մեջ կա վորոշ բարեկամութիւն: Այդ բարեկամութիւնը նկատուի վերջերս Մոսկվայում կայացած համաձայնութեան ժամանակից, վորի հետևանքով լիկվիդացիայի յենթարկվեց մոնղոլա-մանջուրական սահմանի վրա ծաղած հայտնի կոնֆլիկտը:

Մի շարք ամիսների ընթացքում, ավելի ստույգ կերպով ասած՝ մայիսի, հունիսի, հուլիսի, ոգոստոսի ընթացքում և մինչև սեպտեմբերի կեսերը, Նոմանխանի շրջանում, վորը կից և մոնղոլա-մանջուրական սահմանին, ուղղակի գործողութիւններ ելին տեղի ունենում յապոնա-մանջուրական և խորհրդային-մոնղոլական զորքերի մասնակցութեամբ: Այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած մարտական գործողութիւններին մասնակցում ելին ղենքի բոլոր տեսակները, ներառյալ ավիացիան ու ծանր հրետանին, իսկ կոխիկները յերբեմն ընդունում ելին չափազանց արշունահանող բնույթ: Վոչ վորի պետք չեկող կոնֆլիկտն առաջացրեց վոչքէն թվով զոհեր՝ մեր կողմում, բայց այդ զոհերը մի քանի անգամ ավելի շատ յեղան յապոնա-մանջուրական կողմում: Վերջապես, Յապոնիան զիմեց մեզ, առաջարկելով լիկվիդացիայի յենթարկել կոնֆլիկտը, և մենք հոժարութեամբ ընդառաջ դնացինք յապոնական կառավարութեանը:

Ինչպես հայտնի յե, կոնֆլիկտը ծաղել եր այն բանի հետևանքով, վոր Յապոնիան ձգտում եր յորայնել Մոնղոլական Ժողովրդական Հանրապետութեան տերիտորիայի մի մասը և այդ ճանապարհով բռնի կերպով հողուտ իրեն վոխել մոնղոլա-մանջուրական սահմանը: Այսպիսի միակողմանի մեթոդը պետք և վճռական հակահարվածի հանդիպեր և մեկ անգամ ևս

ցույց տվեց իր լիակատար սնանկութեանը, յերբ խոսքը վերաբերում և խորհրդային Միութեանը կամ նրա դաշնակիցներին: Յեթե Լեհաստանի չարաբաստիկ որինակով վերջերս ցուցադրվեց, թե յերբեմն վորքան եժան և լինում Յեվրոպայի վորոշ մեծ տերութիւնների կողմից ստորադրված փոխադարձ ողնութեան պակտերի դինը (ծիծաղ), ապա մոնղոլա-մանջուրական սահմանի վրա ցուցադրվեց միանգամայն այլ բան: Այստեղ ցուցադրվեց փոխադարձ ողնութեան այն պակտերի նշանակութիւնը, վորոնց տակ դրված և խորհրդային Միութեան ստորադրութիւնը: (Բուռն, յերկար ժամանակ չլող ծափահարութիւններ):

Ինչ վերաբերում և հիշյալ կոնֆլիկտին, ապա սեպտեմբերի 15-ին Մոսկվայում կնքված խորհրդային-յապոնական համաձայնութեան հետևանքով այն լիկվիդացիայի յենթարկվեց և մոնղոլա-մանջուրական սահմանի վրա լիովին վերականգնված և խաղաղութիւնը: Իրանով իսկ կատարվեց առաջին քայլը խորհրդային-յապոնական հարաբերութիւնների բարելավման ուղղութեամբ:

Հերթի յե դրված սահմանային խոսքը հանձնաժողովի ստեղծումը՝ խորհրդային-մոնղոլական և յապոնա-մանջուրական կողմերի ներկայացուցիչներին: Այդ հանձնաժողովը պետք և քննարկի սահմանային մի քանի վիճելի հարցեր: Կարելի յե չտարակուսել, վոր յեթե բարի կամքն արտահայտվի վոչ միայն մեր կողմից, ապա սահմանային հարցերի գործուն քննարկման մեթոդը կտա զրական արդիւններ:

Բացի դրանից, պարզվեց խորհրդային-յապոնական սուևտրի հարցերի վերաբերյալ բանակցութիւններ սկսելու հնարավորութիւնը: Չի կարելի չխոստո-

վանել, վոր խորհրդային-յապոնական ապրանքաշրջանառութեան զարգացումը համապատասխանում է յերկու պետութեաննրի շահերին:

Այսպիսով, մենք հիմք ունենք խոսելու Յաստիսայի հետ մեր հարաբերութեաննրի նկատուող բարեկամման մասին: Այժմ դժվար է դատել, թե ինչ չափով կարելի յէ հույս դնել այդ տենդենցի արագ զարգացման վրա: Մեզ դեռ չի հաջողվել պարզել, թե դրա համար վարքան լուրջ կերպով և հող նախապատրաստված յապոնական շրջաններում: Իմ կողմից պետք է ասեմ, վոր մենք դրականապես ենք վերաբերվում Յաստիսայի այդ տեսակի առաջարկներին, մոտենալով դրանց մեր հիմնական քաղաքական դիրքի և խողացութեան շահերի մասին հոգատարութեան տեսակետից:

Վերջապես, մի քանի խոսք ուղղման կոնտրաբանդայի և չեզոք յերկրներից պատերազմող յերկրները գենք արտահանելու մասին:

Որերս հրատարակվեց խորհրդային կառավարութեան նոտան՝ ի սրտասխան Անգլիայի սեպտեմբերի 6-ի և 11-ի նոտաներին: Մեր նոտայի մեջ շարադրված է ԽՍՀՄ անտակետը ուղղման կոնտրաբանդայի հարցերի նկատմամբ և մասնանշված է, վոր խորհրդային կառավարութեանը չի կարող ուղղման կոնտրաբանդայի թիվը դասել անդամթերքները, վառելիքը՝ խողացող բնակչութեան համար և հաղուստի առարկաները, վոր մասսայական սպառման առարկաների ներմուծումն արդէլելը նշանակում է յերեխաներին, կանանց, ծերունիներին, հիվանդներին դատապարտել աղետի ու սովամահութեան: Խորհրդային կառավարութեանը նո-

տայի մեջ մատնանշում է, վոր այդպիսի հարցերը չեն կարող լինել միակողմանի վորոշման առարկա, ինչպես այդ արեց Անգլիան, այլ պետք է լուծվեն տերութեաննրի ընդհանուր համաձայնութեամբ: Մենք հույս ունենք, վոր չեզոք յերկրները, ինչպես նաև Անգլիայի ու Ֆրանսիայի հասարակական կարծիքը, կընդունեն մեր դիրքի ճշտութեանը և միջոցներ ձեռք կառնեն, վորպեսզի պատերազմող յերկրների բանակների միջև մղվող պատերազմը չվերածվի պատերազմի՝ ընդդեմ մանուկների, կանանց, ծերունիների, հիվանդների: Համենայն դեպս մեր յերկիրը, վորպես չեզոք յերկիր, վորը շահագրգռված չէ պատերազմի հրահրումով, ձեռք կառնի բոլոր միջոցները, վորպեսզի պատերազմը դարձվի ավելի պակաս չափով ավերիչ, թուլացիլի այն և արագացիլի նրա ավարտումը՝ հոգուտ խողացութեան շահերի:

Այսպիսի հեռանկարի տեսակետից, ամերիկյան կառավարութեան վորոշումը՝ պատերազմող յերկրները գենք արտահանելու արդէլը (եմբարգոն) վերացնելու մասին՝ առաջացնում է որինական տարակույս: Հաղիվ թե կարող է տարակույս լինել, վոր այդ վորոշման արդյունքը կլինի վո՛չ թե պատերազմի թուլացումը և վո՛չ թե պատերազմի վախճանի մոտեցումը, այլ ընդհակառակը՝ պատերազմի ուժեղացումը, սրումը և ձգձգումը: Իհարկէ, այդպիսի վորոշումը կարող է բարձր շահույթներ ապահովել ամերիկյան ուղղման արդյունաբերութեան համար: Բայց ահա մի հարց. այդ հանգամանքը կարո՞ղ է արդյոք արդարացում ծառայել Ամերիկայից գենք արտահանելու եմբարգոյի վերացման համար: Պարզ է, վոր չի՛ կարող:

Այսպիսին է միջազգային իրադրութիւնը ներկայումս:

Սրանք են ինքնիշխան Միութեան արտաքին քաղաքականութեան հիմունքները: (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարութեաններ, վարձով վերածվում են ովացիայի: Բայր դեպուտատները վառփի յեն կանգնում):

Խմբագիր Բ. Ն. Դավթյան
Տէխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Դուրխանյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արովյան

Գլավիլիաի լիազոր № 4—2629, հրտա. № 751

Պատվեր № 232, արժամ 10.000

Հանձնվել է արտադրութեան 4/XI 1939 թ.

Ստորագրվել է տպագրելու 5/XI 1939 թ.

Գինը 15 Լ.

Քաղաքական գրահանութեան պետական
հրատարակչութեան տպարան,
Յերևան, Ալլանվերդյան № 65

10

ՀՀ Ազգային գրադարան



NL0937749

9-1-70, 15 ч.

1
3644

Внеочередная пятая сессия Верховного
Совета СССР 1-го созыва

**О ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ
СОВЕТСКОГО СОЮЗА**

Доклад Председателя Совета Народных
Комиссаров и Народного Комиссара Иностранных
Дел тов. В. М. МОЛОТОВА на заседании
Верховного Совета СССР 31 октября 1939 года

Государственное издательство полит. литературы
Ереван 1939